

ԱՂՕԹԵՍ ԸՆԴՈՒՆԵԼԻ՞ Է

Բոլորս այս հարցումը կ'ուղղենք: Գիտնալով, երբեմն անոր պատասխանը կասկածով կը մօտենանք եւ անգիտակցաբար կը մեղանչենք: Երբ մեր օրինազանցութիւններուն համար կ'աղօթենք կամ կ'աղերսենք Աստուծոյ, մեր մտքերը եւ մտածումները, ականջները եւ աչքերը, այլ տեղեր պետք է դարձնենք կամ պտտցնենք, այլ՝ հեծեծանքով եւ հառաչանքով Տիրոջ բարկութիւնը մեղմենք եւ գուրջը շարժենք, որուն համար ալ ան մեր մեղքերը պիտի քաւէ, մեզ պիտի մաքրէ մեր անօրէնութիւններէն եւ պիտի փրկէ սարսափելի պատիժներու դժուարութիւններէն եւ յաւիտենական ամօթէն, շնորհիւ մեր աղօթքներուն եւ շերմեռանդ սրտին:

Աղօթքը աղօթողին ձեռքն է, որով կը բռնէ Աստուծոյ ոտքերէն ու զայն կը թեքէ աղերսողին աղօթքին կողմը: Աստուած կը սիրէ աղօթողին հետեւեալ աղաչանքը. «Խնդրեցէք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէք եւ պիտի գտնէք» (Մատթ 7:7):

ԼՈՒՍՈՎԴԻ ՔՈ ՔՐԻՍՏՈՍ

Բու լոյսովդ, Քրիստոս ամէնքս լուսաւորուեցանք եւ հաւատացեալներս Փրկիչ, բու սուրբ Խաչիդ ապաւինեցանք: Լսէ մեզ, Աստուած՝ մեր փրկիչը, բու խաղաղութիւնդ տուր մեզի, եւ բու ողորմութիւնդ շնորհէ մեզի, մարդասէր Տէր:

ԽԱՆԱՓԱՅՏ



Խաչափայտէն մասունք մը իր մէջ ամփոփող նաեւանչը վարի կողմէ խողովականման կոթ մը կ'ունենայ, որ կը ծառայէ Ս. Սեղանին վրայ փայտեղէն պատուանդանի մը վրայ հաստատելու եւ միանգամայն պէտք եղած պարագային մասնաւոր բռնիչով մը վերցնելու խաչահանգիստի ընթացքին ջուրը օրհնելու վասն բժշկութեան, բարօրութեան եւ օրհնութեան հայ ընտանիքներու յարկերուն:

Խաչափայտի մասուհին հիմնական գործածութիւնը՝ Խաչվերացի տօնի երեկոյեան ժամերգութենէն ետք կատարուող անդաստանի արարողութեան մէջ է, ուր հանդիսապետող եկեղեցականը ունեւանագարդ Խաչափայտով եկեղեցւոյ չորս կողմերը կ'օրհնէ, մինչ քահանայ հայրերը ծաղկեջուր կը սրսկեն հաւատացեալներուն վրայ:

Խաչափայտին մասուհնը միշտ պէտք է մնայ Ս. Սեղանին վրայ, որպէս պարծանք եկեղեցւոյ՝ ինչպէս պիտի ըսէր Պօղոս Առաքեալ. « Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. 6.14):



ԲՈՒ ԽՕՍԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023

ԹԻԻ 42

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵՆԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Եւ. 19.1-11: Բ. Գղ.2.1-10: Սր. 12.35-44

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 12.35-44

Յիսուս տաճարին մէջ ուսուցանելու ընթացքին հարցուց ժողովուրդին. «Օրէնքի ուսուցիչները, ինչպէ՞ս կրնան ըսել, թէ Քրիստոս՝ խոստացուած Փրկիչը, Դաւիթի սերունդէն է», երբ Դաւիթ ի՛նք Սուրբ Հոգիով ներշնչուած կ'ըսէ. «Տէրը ըսաւ իմ Տիրոջս. աջ կողմս նստէ՛, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ՝ որպէս պատուանդան»:

Եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս ուրեմն Քրիստոս անոր որդին է:

Ժողովուրդը հաճոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի, որ իր ուսուցումները շարունակելով կ'ըսէր. «Զգոյշ եղէ՛ք օրէնքի ուսուցիչներէն, որոնք կը սիրեն փառատր զգեստներով շքիլ, հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիք բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տուները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Անոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունին»:


Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր գանձանակին մէջ: Շատ մը հարուստներ մեծ գումարներ նետեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ նետեց երկու լումայ, որ հինգ դահեկան կ'ընէ: Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց. «Վստահ գիտցէ՛ք, որ այս թշուառ այրին բոլորէն աւելի դրամ նետած եղաւ գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց աւելորդ գումարներէն նետեցին, մինչ ան՝ հակառակ չքատր ըլլալուն՝ ինչ որ ունէր նետեց, իր ամբողջ ապրուստը»:

ԱՌԱԿ 15

Բարկացոտ մարդը կռիւ կը ստեղծէ, մինչ համբերատարը գալիք խոռվութիւնը կը մեղմացնէ: Համբերատար մարդը վէճերը կը մարէ, մինչ ամբարիշտը աւելի կը հրահրէ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՍԱՆՉԱՅ ՎԱՐՔ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ



Ս. Մեսրոպ Մաշտոց ծնած է Տարօն գաւառի Հացեկաց գիւղը: Սորված է յունարէն, ասորերէն եւ պարսկերէն լեզուները: Հայոց Խոսրով Դ. թագաւորի պալատին մէջ վարած է զինուորական ֆարտուղարի պաշտօն եւ նանչցուած է որպէս գիտնական անձնաւորութիւն:

Աստուծոյ, ազգին ու եկեղեցիին հանդէպ իր սէրը այնքան վառ եղած է, որ թագաւորական պալատը ձգելով դարձած է կուսակրօն եկեղեցական եւ նուիրւած է Ս. Աւետարանի ֆարոգչութեան:

Ս. Սահակի նման, ինքն ալ իր շուրջը հաւաքած է երիտասարդ կրօնաւորներ եւ անոնց հետ շրջած է Հայաստանի զանազան կողմերը՝ Քրիստոսի լոյսը տարածելու համար: Իր ջանքերը եղած են արդիւնաւէտ: Իր ֆարոգներուն շնորհիւ, Գողթան գաւառի մէջ ջնջուած են հեթանոսական մեղսալի սովորութիւնները եւ մարդիկ աստուածապաշտութեան հետեւած են:

Իր ֆարոգներուն ընթացքին, զգացած է հայ լեզուի համար սեփական գիրերու անհրաժեշտութիւնը եւ ձեռնարկած է հայ գիրերու գիւտին:

Ի վերջոյ աստուածային յայտնութեամբ կատարելագործած է իր աշխատանքը եւ ամբողջացուցած՝ հայոց այբուբենը: Ձեռնարկած է Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան:

Ս. Մեսրոպ առաջին ուսուցիչն է հայ լեզուին եւ հիմնադիրը՝ հայ գրականութեան: Ինքն է հայերէնը գրաւոր լեզու դարձնող ռահվիրան:

Թարգմանչական աշխատանքի կողմին, գրած է շարականներ, յորդորական թուղթեր եւ աղօթքներ:

Մեսրոպ Մաշտոց եղած է հայ Ծիսարանի առաջին իմբագիրը, որ հետագային ունեցած է իր յաւելումները: Այդ գիրքը իր անունով կոչուած է «Մաշտոց», որ կը գործածուի մինչեւ այսօր:

Ս. Մեսրոպ Մաշտոց, հայ գիրերու գիւտէն ետք, հնարած է նաեւ վրացիներուն եւ աղուաններուն այբուբենը:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՏՕՆԵՐԸ Ե՞ՐԲ ՍԿԱՆ

Աւանդութիւնը կ'ըսէ, որ առաջին երեք դարերուն, սուրբերու նահատակութեան թուականին, անոնց յիշատակը կը կատարէին: Չորրորդ դարուն, մեր Լուսաւորիչը՝ Գրիգոր տօնեց Հռիփսիմեանց եւ Գայիանեանց տօները, եւայլն: Հինգերորդ դարուն, Սուրբ Սահակ Պարթեւ Հայրապետին գործակցութեամբ, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրեց տօնացոյցը մինչեւ իրենց օրերը, եւ ինչպէս հին ձեռագիրներու տօնացոյցներէն կ'երեւի, սուրբերուն յիշատակները տնօրինած է ուտիֆի եօթնեակներու չորս օրերը: Ապա, եկեղեցւոյ տօնացոյցը հետգիտէ հարստացաւ նահատակներով եւ որբակեացներով, մինչեւ տասնհինգերորդ դար, ինչպէս նաեւ տնօրինուեցաւ՝ Ամենայն Սրբոց՝ հին թէ մոր, յայտնի թէ անյայտ սուրբերու տօնը:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ԵԿԵՂԵՅԻ ՅԱՃԱԽՈՂՆԵՐՈՒՆ

«Տաճարին Գեղեցիկ կոչուած դարպասին քով կը դնէին, որպէսզի տաճար մտնողներէն ողորմութիւն խնդրէ» (Գրծ. 3.2): Իրաւունք չունէ՞ր այս ի ծնէ կաղ մարդը ողորմած Աստուծոյ տան առջեւ կենալ եւ ողորմութիւն խնդրել: Միայն Աստուած գիտէ, թէ որքա՞ն անողորմ մարդիկ կը յաճախէին ու կը յաճախէն ողորմած Աստուծոյ տունը: Միայն Աստուած գիտէ, թէ որքա՞ն անսէր մարդիկ կը յաճախէին ու կը յաճախէն սիրոյ Իշխանին՝ Քրիստոսի տունը: Միայն Աստուած գիտէ, թէ որքա՞ն մարդիկ կու գային եւ կու գան եկեղեցի՝ առանց երբեք Աստուծոյ եկած ըլլալու: Միայն Աստուած գիտէ, թէ որքա՞ն մարդիկ կը լեցուէին եւ կը լեցուին Աստուծոյ տաճարին մէջ՝ առանց երբեք լեցուելու Աստուծով:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ

Ո՛վ եկեղեցի եկող մարդիկ, երբ եկեղեցի կու գաք՝ Աստուծոյ հանդիպելու նպատակով եկէք եւ ոչ թէ իրար հանդիպելու: Ասկէ առաջ ըսած ենք՝ ամէն եկեղեցի եկող Աստուծոյ եկող մը չէ, բայց դուք, փորձեցէք Աստուծոյ եկողներէն ըլլալ:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՁԻ ՎԵՏ ԲԼԼԱՅ

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԾԱՆՐ ՀԻՒՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՀՈՒՐՆ ՎՏԱՆԳԻՆ ՄԷՋ ԵՍ, ԿԱՐՂԱ՛Ք՝ ՍԱՂՄՈՍ 38

Տէ՛ր, զայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս: Արդէն նետերդ մարմինիս մէջ միտուեցան, հարուածներդ ծանրացան իմ վրաս: Սաստիկ բարկութեանդ իբրեւ հետեւանք՝ մարմինիս վրայ առողջ տեղ չէ մնացած. մեղքիս իբրեւ հետեւանք՝ հանգստութիւն չկայ բնաւ մարմինիս մէջ: Որովհետեւ անօրէնութիւններս գլուխէս վեր բարձրացան, ծանր բեռի պէս կը ճնշեն վրաս: Յիմարութեանս պատճառով՝ նեխեցան ու փտեցան վերքերս: Կքած ու չափազանց նուաստացած, ամբողջ օրը տրտում-տխուր կը շրջիմ: Ներսս կարծես կրակի մէջ է, մարմինիս վրայ առողջ տեղ չէ՛ մնացած: Ամբողջապէս ուժասպառ եմ ու խորտակուած, ցաւէս կը տնքամ՝ մոռնչելու պէս: Տէ՛ր, դուն գիտես իմ բաղձանքս, եւ անտեղեակ չես հեծեծանքներուս: Միրտս կը նուաղի, ուժերս զիս կը լքեն, եւ աչքերուս լոյսը կը մարի: Բարեկամներս եւ ընկերներս հեռու կը մնան՝ հիւանդութեանս պատճառով, նոյնիսկ հարազատներս ինձմէ հեռու կը մնան: Իսկ անոնք, որ իմ մահս կը կամենան, անոնք թակարդ կը լարեն, կործանումս ուզողները՝ սպառնալիք կը տեղան, եւ օրն ի բուն նենգութիւններ կը խորհին: Ես խուլ կը մնամ անոնց դիմաց, ու չեմ լսեր, համը կը մնամ՝ ու բերանս չեմ բանար: Այո՛, չեմ լսեր, ո՛չ ալ կ'ուզեմ պատասխանել: Բայց ես, ո՛վ Տէր, յոյսս քու վրադ դրած եմ: Անոնց դուն ի՛նքդ պիտի պատասխանես, Տէ՛ր, իմ Աստուածս: Կը խնդրեմ, Տէ՛ր, թոյլ մի՛ տար, որ վրաս խնդան: Երբ, որ ոտքս սայթաքի, իրենք զիրենք յաղթող չկարծեն: